78 **Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

1. Ազգային կոնվենտի կողմից Ֆրանսիան հանրապետություն հռչակելը
2. գերմանա-ֆրանսիական պատերազմի ավարտը
3. Վիլհելմ Օրանցու Անգլիայի թագավոր հռչակվելը
4. Հունգարիայի անկախության պատերազմի պարտությունը
5. Իտալիայի թագավորության հռչակումը

ա. 1871թ.
բ. 1849թ.
գ. 1861թ.
դ. 1689թ.
ե. 1792թ
զ. 1653թ.

1) 1-ա, 2-զ, 3-բ, 4-գ, 5-ե
2) 1-գ, 2-ե, 3-զ, 4-ա, 5-դ
3) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ, 5-գ
4) 1-բ, 2-գ, 3-ե, 4-զ, 5-ա

79 **Մշակույթի գործիչներին համապատասխանեցնել այն երկրների հետ, որտեղ նրանք ստեղծագործել են.**

1. Թ. Ժերիկո
2. Ֆ. Լիստ
3. Ջ. Ռոսինի
4. Հ. Հայնե
5. Մ. Լերմոնտով

ա. Գերմանիա
բ. Իսպանիա
գ. Ֆրանսիա
դ. Իտալիա
ե. Հունգարիա
զ. Ռուսաստան

1) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-զ
2) 1-ե, 2-բ, 3-զ, 4-դ, 5-ա
3) 1-բ, 2-զ, 3-դ, 4-ե, 5-ա
4) 1-բ, 2-ա, 3-գ, 4-զ, 5-դ

80 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. Կարիբյան ճգնաժամը
2. ԳԴՀ-ի ստեղծումը
3. Բեռլինի պատի փլուզումը
4. «Սառը պատերազմի» սկիզբը
5. Հակահիտլերյան խմբավորման ձևավորումը

ա. 1946թ.
բ. 1989թ.
գ. 1962թ.
դ. 1949թ.
ե. 1961թ.
զ. 1942թ.

1) 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-գ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա, 5-զ
3) 1-ե, 2-ա, 3-զ, 4-դ, 5-բ
4) 1-ա, 2-գ, 3-դ, 4-զ, 5-ե



ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

# ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

**1** **Ե՞րբ է հիմնադրվել համաեգիպտական XI հարստությունը.**

1) Ք.ա. 2400թ.
2) Ք.ա. 1540 թ.
3) Ք.ա. 2040թ.
4) Ք.ա. 1840թ

**2** **Ե՞րբ են կատարվել Կլիսթենեսի բարեփոխումները.**

1) Ք.ա. 528թ.
2) Ք.ա. 564թ.
3) Ք.ա. 594թ.
4) Ք.ա. 508թ.

**3** **Ե՞րբ է ֆրանկների առաջնորդ Քլոդվիգն ընդունել քրիստոնեություն.**

1) 496թ.
2) 500թ.
3) 510թ.
4) 486թ.

**4** **Ե՞րբ է տեղի ունեցել խաչակրաց երկրորդ արշավանքը.**

1) 1096-1099թթ.
2) 1147-1149թթ.
3) 1189-1192թթ.
4) 1202-1204թթ.

**5** **Ե՞րբ է Վիլհելմ Օրանցին հռչակվել Անգլիայի թագավոր.**

1) 1689թ.
2) 1679 թ.
3) 1688 թ.
4) 1690թ.

**6** **Ե՞րբ է սկսվել Արևելյան(Ղրիմի) պատերազմը.**

1) 1877թ.
2) 1853թ.
3) 1856թ.
4) 1828թ.

**7** **Ե՞րբ է Գերմանիան գրավել Հռենոսյան ապառազմականացված գոտին.**

1) 1937թ.
2) 1939թ.
3) 1936թ.
4) 1938թ.



**76** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մ.Թետչերի կողմից առաջին անգամ վարչապետի պաշտոնի ստանձնումը
բ. Շարլ դը Գոլի հեռանալը քաղաքական ասպարեզից
գ. Կոսովոյի անկախության ճանաչումը
դ. Աբխազիայի անկախության ճանաչումը
ե. Անգլ-բուրական պատերազմը
զ. Ռուս-ճապոնական պատերազմը
է. Ջ. Քենեդու սպանությունը
ը. Ֆոլկլենդյան պատերազմը
թ. Շենգենյան համաձայնագրի կնքումը
ժ. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի ստեղծումը

1) ը,ե,զ,բ,է,ժ,դ,ա,գ,թ
2) ե,զ,ժ,է,բ,ա,ը,դ,թ,գ
3) զ,ե,է,ժ,ա,բ,դ,ը,գ,թ
4) է,թ,ժ,ա,դ,ե,գ,բ,ը,զ

**77** **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Վայրը | # | Տարեթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հույն-պարսկական հաշտության պայմանագրի կնքումը | 1. | Միկալե հրվանդան | 1. | Ք.ա. 480թ. |
| 2. | Պարսկական նավատորմի վերջնական ջախջախումը | 2. | Թերմոպիլյան կիրճ | 2. | Ք.ա. 449թ. |
| 3. | 300 սպարտացիների դիմակայությունը պարսից բանակին | 3. | Քիոս կղզի | 3. | Ք.ա. 479թ. |
| 4. | Մակեդոնական նավատորմի պարտությունը Արևելյան Միջերկրականի դաշնակից երկրների կողմից | 4. | Շոշ | 4. | Ք.ա. 201թ. |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 4 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 2 |
| 4 | 2 | 1 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 1 |
| 2 | 1 | 2 |
| 3 | 2 | 3 |
| 4 | 4 | 4 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| 2 | 2 | 1 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 3 | 3 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 2 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 3 | 4 |

73 **Նշվածներից ո՞րոնք են Հռոմում հանրապետական կարգի ճգնաժամի հիմնական պատճառները.**

ա. Իտալիայի հյուսիսում բնակվող գալլերի անընդմեջ ապստամբությունները:
բ. Ք.ա. I դարի սկզբին հանրապետական կառավարման համակարգի միջոցով լայնածավալ պետության վերահսկման դժվարությունը:
գ. Իտալիկների պայքարը՝ հռոմեական քաղաքացիներին հավասար իրավունքներ ստանալու համար և ապստամբությունները:
դ. Գերմանական ցեղերի զանգվածային վերաբնակեցումը Հռոմեական հանրապետության տարածքում:
ե. Ժողովրդավարական ուժերի (պոպուլյարներ) և Ծերակույտի վերնախավի (օպտիմատներ) միջև սրված պայքարը:

1) ա,բ,գ
2) ա,գ,դ
3) բ,գ,ե
4) բ,դ,ե

74 **Բերված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են Գերմանիայի ծավալապաշտական քաղաքականության պատճառ.**

ա. Միջազգային հանրության կողմից վճռական գործողությունների դիմելուն պատրաստ չլինելը:
բ. Կախյալ տարածքների կառավարման նոր՝ մանդատային համակարգի ստեղծումը:
գ. Գերմանիայից բխող վտանգի թերագնահատումը:
դ. Մի շարք երկրների անկախության վերացումը:
ե. Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից տարվող Գերմանիայի խաղաղեցման քաղաքականությունը:
զ. Միջազգային կազմակերպությունների և կառույցների լուծարումը խոշոր տերությունների կողմից:

1) ա,բ,դ
2) ա,գ,ե
3) բ,գ,դ
4) գ,ե,զ

75 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Առաջին 10-ը փոփոխությունները ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ
բ. հանրապետության հռչակումը Անգլիայում
գ. Պետրոս (Պյոտր) Մեծի կողմից կայսեր տիտղոսի ընդունումը
դ. Վիեննայի վեհաժողովը
ե. Ռուսաստանի 50 նահանգների ստեղծման մասին Եկատերինա II-ի օրենքը
զ. Ավստրիայի պարտությունը Պրուսիայի դեմ պատերազմում
է. Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրության լուծարումը Նապոլեոն I-ի կողմից
ը. Օտտո Բիսմարկի նշանակվելը Պրուսիայի առաջին նախարար
թ. Իտալիայի թագավորության հռչակումը
ժ. Բուրբոնների տիրապետության դեմ ֆրանսիական հեղափոխությունը

1) թ,գ,ա,դ,ե,բ,ժ,ը,զ,է
2) ա,դ,գ,բ,ը,զ,ե,ժ,թ,է
3) դ,ա,գ,ե,բ,է,ը,զ,ժ,թ
4) բ,գ,ե,ա,է,դ,ժ,թ,ը,զ



8 **Ո՞ր արքայի օրոք Աքքադի թագավորությունը հասավ հզորության բարձրակետին.**

1) Համմուրապիի
2) Ուտուխեգալի
3) Նարամսինի
4) Սարգոնի

9 **Ո՞վ էր Եգիպտոսի Հին թագավորության առաջին փարավոնը.**

1) Թութմոս I-ը
2) Մինան
3) Յահմոս I-ը
4) Ջոսերը

10 **Ո՞վ է «Անառակ որդու վերադարձը» կտավի հեղինակը.**

1) Ռուբենսը
2) Ալբրեխտ Դյուրերը
3) Ռեմբրանդտը
4) Ռաֆայել Սանտին

11 **Եվրոպական ո՞ր պետություններն են առաջինը ստեղծել գաղութային կայսրություններ.**

1) Ավստրիան,Իտալիան
2) Անգլիան,Ֆրանսիան
3) Հոլանդիան,Գերմանիան
4) Պորտուգալիան,Իսպանիան

12 **Ինչպե՞ս վերանվանվեց անգլիական թորի կուսակցությունը XIX դարի 50-70-ական թթ..**

1) պահպանողական
2) շովինիստական
3) ազատական
4) սոցիալիստական

13 **Ինչպե՞ս էր կոչվում խորհրդային առաջին իշխանությունը Ռուսաստանում.**

1) Ժամանակավոր հեղափոխական կառավարություն
2) Բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդ
3) Կոալիցիոն կառավարություն
4) Ժողովրդական կոմիսարների խորհուրդ

14 **Ո՞վ էր ԱՄՆ-ի «բարգավաճման ժամանակաշրջանի» նախագահը.**

1) Հ. Թրումանը
2) Ֆ. Ռուզվելտը
3) Ք. Քուլիջը
4) Ջ. Քենեդին

15 **Ի՞նչ է դեմոսը.**

1) Պետականության ձև հինհունական պոլիսում:
2) Հին հունական հասարակության անազատ բնակչությունը:
3) Պոլիսի կառավարմանը մասնակցող արական ողջ ազատ բնակչությունը:
4) Պոլիսի կառավարման գլուխ կանգնած տոհմային ավագանին:

16 **Ո՞րն է «դեկրետ» բառի բացատրությունը.**

1) Կառավարման մարմին Ֆրանսիայում
2) Փոփոխություն կամ կատարելագործում
3) Խորհրդային Ռուսաստանի օրենսդիր և գործադիր իշխանության բաձրագույն մարմինների ընդունած օրենք
4) Քաղաքական կամ տնտեսական ղեկավար սկզբունք

17 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Ասորեստանի արքա Սալմանասար I-ի թագավորության ավարտը
բ) Յահմոս I-ի կողմից համաեգիպտական XVIII հարստության հիմնումը
գ) Բաբելոնիայի նվաճումը խեթական արքա Մուրսիլիս I-ի կողմից
դ) Եգիպտոսի Միջին թագավորության դարաշրջանի սկիզբը

1) դ,ա,բ,գ
2) դ,բ,գ,ա
3) ա,գ,դ,բ
4) բ,ա,գ,դ

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Եգիպտացիների կողմից Անտիոքի գրավումը
բ) Ազատությունների մեծ հրովարտակի ստորագրումը Հովհան Անհողինի կողմից
գ) Գլխավոր շտատների հրավիրումը
դ) Խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի գրավումը

1) դ,ա,գ,բ
2) գ,ա,բ,դ
3) գ,բ,ա,դ
4) դ,բ,ա,գ

19 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցումը Ավստրո-Հունգարիայի կողմից
բ. Անգլո-բուրական պատերազմը
գ. Բեռլինի վեհաժողովը
դ. Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի զավթումը Իտալիայի կողմից

1) ա,գ,դ,բ
2) գ, բ, ա,դ
3) բ,դ,ա,գ
4) գ,բ,դ,ա

20 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Բեռլինի ճակատամարտը
բ) Մոսկվայի ճակատամարտը
գ) Ստալինգրադի ճակատամարտը
դ) Կուրսկի ճակատամարտը

1) բ,գ,դ,ա
2) դ,գ,բ,ա
3) գ,դ,բ,ա
4) բ,դ,ա,գ



70 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. ապելլա
2. պերիօյկոս
3. առաջին ստրատեգոս
4. դոմինատ
5. պրինցիպատ

ա. Սպարտական պետության սահմանամերձ շրջանների բնակիչ
բ. կայսր Դիոկղետիանոսի կառավարման համակարգը
գ. Սպարտայի գերագույն օրենսդիր մարմին
դ. վաղ կայսրությունը Հռոմում
ե. Աթենական պետության բարձրագույն գործադիր պաշտոնյա
զ. աթենական աշխարհազորի հրամանատար

1) 1-ա, 2-զ, 3-դ, 4-ե, 5-գ
2) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-դ
3) 1-զ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-բ
4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ, 5-զ

71 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. վասիլես
2. բենեֆիցիում
3. մայորդոմ
4. Գլխավոր շտատներ
5. ուլուս

ա. Փոխարքայություն Մոնղոլական տերությունում:
բ. Նախապես՝ արքունի կալվածքների կառավարիչ Ֆրանկական թագավորությունում:
գ. Բյուզանդական կայսեր տիտղոսը:
դ. Ծառայության դիմաց հողի շնորհում վասալին:
ե. Դասային համաժողով միջնադարյան Ֆրանսիայում:
զ. Վարչամիավոր սելջուկների Իկոնիայի սուլթանությունում:

1) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-գ
2) 1-բ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-զ
3) 1-ե, 2-զ, 3-ա, 4-գ, 5-բ
4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե, 5-ա

72 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. իմպրեսիոնիզմ
2. նատուրալիզմ
3. ռեալիզմ
4. կլասիցիզմ
5. ավանգարդիզմ

ա. Իրական կյանքի նույնական, լուսանկարչական ճշգրտությամբ արտացոլում:
բ. Գույների անսովոր համադրմամբ ակնթարթային տպավորության գեղեցկության պատկերում:
գ. Կյանքի ճշմարտացի պատկերում,գնահատում և մեկնաբանում:
դ. Գեղեցիկն անփոփոխ է և հավիտենական, ինչպես բնությունը:
ե. Նորագույն շրջանի արվեստի ուղղության պայմանական անվանում:
զ. Իրականի և ոչ-իրականի միավորում:

1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ, 5-ե
2) 1-դ, 2-բ, 3-զ, 4-գ, 5-ա
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-գ
4) 1-զ, 2-բ, 3-դ, 4-ա, 5-ե

67 **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք տեղ են գտել Ք.ա. 197թ. Հռոմի և Մակեդոնիայի միջև կնքված պայմանագրում.**

ա. Հռոմը հրաժարվում էր Հունաստանի նկատմամբ ունեցած իր հավակնություններից:
բ. Մակեդոնիան պարտավորվում էր հրաժարվել իր բոլոր նվաճումներից:
գ. Հունական քաղաքները ճանաչում էին Մակեդոնիայի գերիշխանությունը և վճարելու էին 3000 տաղանդ ռազմատուգանք:
դ. Մակեդոնիան Հռոմին վճարելու էր 1000 տաղանդ ռազմատուգանք:
ե. Մակեդոնիայի արքա Փիլիպոս V-ը Հռոմին պետք է հանձներ նավատորմը, իսկ մակեդոնական բանակը կրճատեր մինչև 5000 զինվոր:
զ. Հռոմը ճանաչում էր Մակեդոնիայի նվաճումները Եգիպտոսի տիրույթներում:
է. Փիլիպոս V-ն առանց Հռոմի համաձայնության իրավունք չուներ պատերազմ սկսելու որևէ պետության դեմ:

1) բ,գ,ե,զ
2) ա,գ,դ,զ
3) բ,դ,ե,է
4) ա,գ,ե,է

68 **Նշված պնդումներից ո՞րոնք են սխալ.**

ա. Քրիստոնեությունը Հռոմեական կայսրության պետական կրոն է հռչակվել Կոստանդիանոս I կայսեր կողմից հրապարակված Միլանի հրովարտակով:
բ. Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովի որոշմամբ Հռոմի պապի գերագահությունը հաստատվեց միայն Արևմուտքի նկատմամբ:
գ. Դառնալով կայսր՝ Կարլոս Մեծը Միջին Իտալիան նվիրեց Հռոմի աթոռին, որով առաջացավ պապի աշխարհիկ պետությունը:
դ. Լիոնցի առևտրական Պիեռ Վալդոյի հետևորդները կոչվում էին կատարներ:
ե. Իրենց գլխավոր քաղաքի անունով կատարները կոչվեցին ալբիգոյներ:
զ. Հերետիկոսների դեմ Ինոկենտիոս III պապի կոչով կազմակերպված խաչակրաց արշավանքներն ավարտվեցին անհաջողությամբ:

1) ա,գ,ե,զ
2) բ,դ,ե,զ
3) ա,բ,դ,ե
4) ա,գ,դ,զ

69 **Բերված փաստարկներից ընտրել 4-ը,որոնք տեղ են գտել Մուսսոլինիի կորպորատիվ համակարգում.**

ա. Տնտեսության հիմնական ճյուղերի և սոցիալական ոլորտի հանդես գալը իբրև առանձին միավորներ՝ ի դեմս ընկերությունների:
բ. Կարգապահ տնտեսության և կայուն սոցիալական համակարգի ստեղծում:
գ. Ֆինանսական պաշարների կենտրոնացումը պետության ձեռքում:
դ. Դասակարգային պայքարի բացառում:
ե. Ուժի պաշտամունքի միահյուսում «կենսական տարածքների» գաղափարի հետ:
զ. Արտադրել այն ամենը, ինչ մինչ այդ ներմուծվում էր:
է. Քաղաքացիների ակտիվ մասնակցություն տեղական ինքնակառավարմանը:

1) գ,դ,ե,զ
2) ա,բ,դ,զ
3) բ,գ,ե,է
4) ա,դ,զ,է



21 **Ե՞րբ է Օկտավիանոսը հռչակվել ցմահ տրիբուն.**

1) Ք.ա. 31թ
2) Ք.ա. 43թ.
3) Ք.ա. 36թ.
4) Ք.ա. 27թ.

22 **Ե՞րբ է կառավարել Դիոկղետիանոս կայսրը.**

1) 280-305թթ.
2) 161-180թթ.
3) 198-217թթ.
4) 284-305թթ.

23 **Ե՞րբ է առաջացել Գերմանական(Տևտոնական) թագավորությունը.**

1) 933թ
2) 919թ.
3) 936թ.
4) 843թ.

24 **Ե՞րբ է Ավստրո-Հունգարիան բռնակցել Բոսնիան և Հերցեգովինան.**

1) 1907թ.
2) 1905թ.
3) 1908թ.
4) 1909թ.

25 **Ե՞րբ է Ֆրանսիան ճանաչել Ալժիրի անկախությունը.**

1) 1969թ.
2) 1972թ.
3) 1991թ.
4) 1962թ.

26 **Ալեքսադր Մակեդոնացու ո՞ր զորավարը ստանձնեց Եգիպտոսի կառավարումը.**

1) Պտղոմեոսը
2) Կրատերոսը
3) Լիսիմաքոսը
4) Սելևկոսը

27 **Բյուզանդական ո՞ր կայսրը նվաճեց Բուլղարական թագավորությունը.**

1) Ալեքսիոս I-ը
2) Բարսեղ(Վասիլ) I-ը
3) Բարսեղ(Վասիլ) II-ը
4) Ռոմանոս IV Դիոգենեսը

28 **Ո՞ր օսմանյան կառավարիչն է առաջինը ընդունել սուլթանի տիտղոս.**

1) Մուրադ I-ը
2) Օսման բեյը
3) Մահմեդ I-ը
4) Օրհան բեյը

**29** **ԱՄՆ-ի ո՞ր նախագահի օրոք վերացվեց ստրկությունը.**

1) Թոմաս Ջեֆերսոնի
2) Թեոդոր Ռուզվելտի
3) Ջորջ Վաշինգտոնի
4) Աբրահամ Լինկոլնի

**30** **Որտե՞ղ է ստորագրվել Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) ստեղծման պայմանագիրը.**

1) Ֆուլտոնում
2) Նյու Յորքում
3) Բրյուսելում
4) Վաշինգտոնում

**31** **Ո՞րն էր փարավոն Ջոսերի կառավարման գլխավոր հետևանքը.**

1) Եգիպտոսի թագավորությունը նվաճվեց լիբիացիների կողմից:
2) Վերին և Ստորին Եգիպտոսները միավորվեցին:
3) Ստեղծվեց կառավարման կուռ համակարգ և ամրապնդվեց միացյալ Եգիպտոսի թագավորությունը :
4) Ստորին Եգիպտոսն առանձնացավ՝ կազմելով ինքնուրույն թագավորություն:

**32** **Ո՞րն էր 486թ. Սուասոնի ճակատամարտի գլխավոր հետևանքը .**

1) Կործանվեց Արևմտյան Հռոմեական կայսրությունը:
2) Ֆրանկները գրավեցին Հյուսիսարևելյան Գալլիան, ուր շուտով ձևավորվեց նրանց պետությունը:
3) Հռոմեացիներին հաջողվեց Գալլիայից դուրս մղել ֆրանկներին:
4) Ստեղծվեց Ֆրանկական կայսրությունը:

**33** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ասորեստանի արքա Սարգոն II–ի զոհվելը Փոքր Ասիայում
բ. Թիգլաթպալասար III–ի կառավարումը
գ. Բաբելոնիայի կողմից Երուսաղեմին առաջին անգամ տիրելը
դ. Բարդիայի ապստամբությունը Կամբիզի դեմ

1) գ,բ,դ,ա
2) ա,գ,դ,բ
3) բ,ա,գ,դ
4) դ,ա,բ,գ

**34** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Օտտոն I–ի կայսր թագադրվելը
բ. Աբասյան արքայատոհմի հիմնումը
գ. Նովգորոդի և Կիևի միավորումն իշխան Օլեգի կողմից
դ. Մակեդոնական (Հայկական) արքայատոհմի հաստատումը Բյուզանդիայում

1) դ,բ,ա,գ
2) բ,ա,դ,գ
3) դ,ա,գ,բ
4) բ,դ,գ,ա



**65** **Կատարել համապատասխանեցում.**

1. Պտղոմեոս
2. Թալես Միլեթցի
3. Հերոդոտոս
4. Վերգիլիոս
5. Պյութագորաս

ա. մաթեմատիկա
բ. գրականություն
գ. աստղագիտություն
դ. փիլիսոփայություն
ե. պատմագրություն
զ. ճարտասանություն

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
2) 1-զ, 2-բ, 3-ա, 4-ե, 5-դ
3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-զ
4) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-բ

**66** **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Վայրը | # | Տարեթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Քրիստոնեական եկեղեցու չորրորդ տիեզերական ժողովը | 1. | Լոնդոն | 1. | 1215թ. |
| 2. | Խաչակրաց արշավանքը սկսելուն նվիրված եկեղեցական ժողովը | 2. | Յարմուկ գետ | 2. | 451թ. |
| 3. | Ազատությունների մեծ հրովարտակի ստորագրումը | 3. | Քաղկեդոն | 3. | 1095թ. |
| 4. | Արաբների հաղթանակը բյուզանդացիների նկատմամբ | 4. | Կլերմոն | 4. | 637թ. |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 4 | 2 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 4 | 3 |
| 3 | 1 | 1 |
| 4 | 2 | 4 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 1 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 2 | 3 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| 2 | 1 | 2 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 3 | 3 |

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հին պարսկական ցեղերի մուտքը Հարավային Իրան
բ. Երուսաղեմի երկրորդ գրավումը բաբելոնացիների կողմից
գ. Թուդխալիաս II-ի կողմից Խաթթիի գահին տիրանալը
դ. Եգիպտոսի նվաճումը Կամբիզի կողմից
ե. Համմուրապիի թագավորության ավարտը
զ. Նինվեի անկումը
է. Ամորեական ցեղերի կողմից Բաբելոնի հիմնումը
ը. Բաբելոնի գրավումը Թիգլաթպալասար III-ի կողմից
թ. Խեթական տերության հզորության դարաշրջանը
ժ. Ասորեստանի արքա Սալմանասար I-ի կառավարումը

1) թ,գ,ե,է,ա,բ,ժ,դ,զ,ը
2) ը,ժ,ա,է,թ,ե,բ,գ,դ,զ
3) ե,է,ժ,ա,զ,գ,դ,թ,ը,բ
4) է,ե,գ,թ,ժ,ա,ը,զ,բ,դ

62 **Աշխարհիկ և հոգևոր գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակաշրջանի.**

ա. Լևոն III
բ. Օտտոն I
գ. Լենկ Թեմուր
դ. Գրիգորիոս VII
ե. Վուլֆիլ
զ. Ալեքսիոս I
է. Ռիչարդ I Առյուծասիրտ
ը. Ֆիլիպ IV Գեղեցիկ
թ. Կարլոս Մարտել
ժ. Քլոդվիգ

1) բ,ա,ժ,ե,թ,դ,զ,է,գ,ը
2) ե,ժ,թ,ա,բ,դ,զ,է,ը,գ
3) ժ,դ,ե,զ,է,թ,ը,ա,գ,բ
4) թ,ա,բ,ե,դ,ժ,գ,զ,ը,է

63 **Ո՞ր պետությունում էր տարածված հետևյալ ասույթը. «Թագավորն իշխում է, բայց չի կառավարում»:**

1) Գերմանիայում
2) Ֆրանսիայում
3) Ավստրո-Հունգարիայում
4) Մեծ Բրիտանիայում

64 **Ո՞վ էր ներքոհիշյալ ելույթի հեղինակը. «…Որոշ մասերում ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև սահմանը մենք համարում ենք անարդարացի: Իսկապես, Խորհրդային Հայաստանից և Խորհրդային Վրաստանից Թուրքիան տարածքներ պոկեց. դա Կարսի, Արդվինի և Արդահանի մարզերի հայտնի տարածքն է»:**

1) Ա. Գրոմիկոն
2) Գ. Չիչերինը
3) Մոլոտովը
4) Ի. Ստալինը



35 **Ո՞ր երկրում է Ռեֆորմացիայի արդյունքում հաստատվել հետևյալ սկզբունքը. «Ում իշխանությունը, նրա էլ՝ հավատը»:**

1) Անգլիա
2) Գերմանիա
3) Իսպանիա
4) Ֆրանսիա

36 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Մենք հետ ենք մնացել առաջատար երկրներից 50-100տարով: Մենք պետք է այդ հեռավորությունը վազելով անցնենք տասը տարում»:**

1) Ի. Ստալինը
2) Ն. Խրուշչովը
3) Լ. Բրեժնևը
4) Վ. Լենինը

37 **Պատմական գործչի անունը համապատասխանեցնել կառավարման տարեթվերի հետ.**

1. Ալեքսանդր I
2. Եկատերինա II
3. Պետրոս(Պյոտր) I
4. Նիկոլայ I

ա. 1762-1796թթ.
բ. 1855-1881թթ.
գ. 1801-1825թթ.
դ. 1682-1725թթ.
ե. 1825-1855թթ.

1) 1-ա, 2-գ, 3-ե, 4- բ
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե
4) 1-ե, 2-բ, 3-գ, 4-դ

38 **Պատմական գործչի անունը համապատասխանեցնել պաշտոնների հետ.**

1. Իտալիայի վարչապետ
2. Մեծ-Բրիտանիայի վարչապետ
3. ԱՄՆ-ի նախագահ
4. ԳԴՀ-ի կանցլեր

ա. Հ. Քոլ
բ. Լ. Ջոնսոն
գ. Բ. Կրաքսի
դ. Ջ. Մեյջոր
ե. Է. Հոնեկեր

1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե
4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա

**39** **Ո՞վ է վերացրել գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրությունը.**

1) Նապոլեոն III-ը
2) Ալեքսանդր I-ը
3) Յոզեֆ II-ը
4) Նապոլեոն I-ը

**40** **Ո՞վ էր ներկայացնում Մեծ Բրիտանիան Փարիզի խորհրդաժողովում.**

1) Զ. Մեյջորը
2) Լ. Ջորջը
3) Ու. Չերչիլը
4) Կ. Էտլին

**41** **Ո՞րն էր XX դարի սկզբին Ռուսաստանի արդիականացմանը խոչընդոտող հիմնական պատճառը.**

1) Ցարիզմի կողմից վարվող Ռուսաստանի ինքնամեկուսացման քաղաքակա-նությունը:
2) Ցարական Ռուսաստանի պարտությունը 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմում:
3) Պետության ավանդական կառույցները և պահպանողականների դիմադրությունը:
4) Մշտապես կրկնվող գյուղացիական խռովություններն ու ապստամբությունները:

**42** **Ի՞նչ հետևանք ունեցավ «Մյունխենյան գործարքը».**

1) Եվրոպական պետություններին հաջողվեց ֆաշիստական Գերմանիայի ագրեսիան ուղղել ԽՍՀՄ-ի դեմ:
2) Չեխիան և Մորավիան վերածվեցին ֆրանսիական պրոտեկտորատի:
3) Սուդեթի մարզն ու Չեխոսլովակիայի առանձին շրջաններ անցան Գերմանիային, Լեհաստանին և Հունգարիային:
4) Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ապահովեցին անվտանգությունը Եվրոպայում:

**43** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա-կանությամբ.**

ա. Նիկիասի հաշտությունը
բ. Եգիպտոսի նվաճումը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից
գ. Կլիսթենեսի բարեփոխումները
դ. Մակեդոնիայի արքա Փիլիպոս V-ի պարտությունը Քիոսի մոտ

1) գ,ա,բ,դ
2) բ,ա,դ,գ
3) գ,ա,դ,բ
4) դ,բ,գ,ա

**44** **Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հենրիխ I
բ. Լոթար
գ. Գոթֆրիդ Բուլյոնցի
դ. Բարսեղ(Վասիլ) II
ե. Յարոսլավ Իմաստուն

1) ե,բ,գ,դ,ա
2) ա,գ,բ,ե,դ
3) բ,ա,դ,ե,գ
4) գ,ա,բ,դ,ե



**58** **Նշվածներից որո՞նք են խաչակրաց արշավանքների հետևանքները.**

ա. Աճեցին Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող ապրանքափոխանակության ծավալները, ինչն էլ նպաստեց արհեստագործության զարգացմանը Եվրոպայում:
բ. Արևելքի երկրներում լայնորեն տարածվեցին Վաղ Վերածննդի գաղափարները::
գ. Եվրոպայում տարածվեցին մինչ այդ անծանոթ բազմաթիվ մշակաբույսեր:
դ. Եվրոպական երկրներում լայն տարածում գտան իսլամն ու մահմեդական մշակույթը:
ե. Միջերկրածովյան առևտրում բարձրացավ Վենետիկի և Ջենովայի դերակատարությունը:
զ. Խորացան Արևելք-Արևմուտք և բյուզանդական ու հռոմեակաթոլիկական եկեղեցի-ների միջև առկա հակասությունները:

1) ա,գ,ե,զ
2) բ,գ,դ,ե
3) ա,գ,դ,ե
4) բ,դ,ե,զ

**59** **Բերված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետևանք.**

ա. Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում էր Լեհաստանից, Ֆինլանդիայից, Բելառուսիայի մի մասից, Ուկրաինայից և մերձբալթյան երկրներից:
բ. Գերմանիան ընդունում էր իր պարտությունը և զորքերը դուրս բերում ռուսական ռազմակալված տարածքներից:
գ. Ռուսաստանը պարտավորվում էր վճարել 6 միլիոն ոսկի մարկ ռազմատուգանք:
դ. Գերմանիան պարտավորվում էր փոխհատուցել հաղթող երկրների նյութական վնասները:
ե. Օսմանյան Թուրքիային էին տրվում ո՝չ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսն ու Արդահանը:
զ. Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Արևմտյան Հայաստանում ստեղծվում էր ժամանակավոր վարչություն:
է. Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր դադարեցնել գաղտնի բանակցու-թյունները Մեծ Բրիտանիայի հետ:

1) ա,զ,է
2) բ,ե,զ
3) գ,դ,է
4) ա,գ,ե

**60** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Փարավոն Ամենհոտեպ IV-ի (Էխնաթոն) կրոնական բարեփոխումները
բ. Եգիպտոսի Հին թագավորության անկումը
գ. Միացյալ Եգիպտոսի ստեղծումը Մինայի կողմից
դ. Եգիպտոսի ենթարկվելը Քուշի գերիշխանությանը
ե. Փարավոն Ջոսերի կառավարումը

1) դ,ա,գ,բ,ե
2) ե,գ,բ,դ,ա
3) գ,ե,բ,ա,դ
4) բ,ա,դ,ե,գ

**55** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. կատարներ
2. մեծ մագիստրոս
3. ուշը
4. գիլդիա

ա. Հոգևոր-ասպետական միաբանության ղեկավար:
բ. Առևտրականների կազմակերպություններ միջնադարյան Եվրոպայում:
գ. Հերետիկոսական շարժման մասնակիցներ Ֆրանսիայում:
դ. Մուսուլմանների կողմից վճարվող տասանորդ:
ե. Նախապես՝ արքայական կալվածքների կառավարիչ Գերմանական թագավորությունում:

1) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ
2) 1-ա, 2-ե, 3-բ, 4-գ
3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
4) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա

**56** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. ռազմակալում(օկուպացիա)
2. ռազմատուգանք(կոնտրիբուցիա)
3. գերիշխանություն(հեգեմոնիա)
4. բռնազավթում(անեքսիա)

ա. Մի պետության կողմից մեկ այլ պետության տարածքի(դրա մի մասի) բռնի զավթում կամ միավորում:
բ. Որևէ պետության, քաղաքական ուժի կամ միության ղեկավար, գերիշխող դերը մյուսների նկատմամբ:
գ. Պատերազմում պարտված երկրի կողմից կատարվող դրամական վճարում հաղթող երկրին:
դ. Պատերազմում պարտված երկրի տարածքի ժամանակավոր գրավումը հաղթող երկրի զինված ուժերի կողմից:

1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
3) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

**57** **Բերված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են Թութմոս III-ի նվաճումների հետևանք.**

ա. Ստեղծվեց Եգիպտական տերությունը, որը հյուսիսից հարավ ձգվում էր 3200կմ:
բ. Եգիպտոսին միացվեցին Խեթական պետությունը և Բաբելոնիան:
գ. Փարավոնի կողմից ստեղծվեց նորանված երկրների նկատմամբ քաղաքականությունն իրականացնող գաղութային վարչություն:
դ. Առաջին անգամ նվաճված երկրների և ժողովուրդների վրա սահմանվեցին հարկային պարտավորություններ:
ե. Խիստ սահմանափակվեցին Ամոնի տաճարի քրմության արտոնությունները:

1) ա,բ,դ
2) ա,բ,ե
3) բ,դ,ե
4) ա,գ,դ



**45** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ուոթրգեյթյան գործը
բ. Վարշավայի պայմանագրի կնքումը
գ. Ռուսաստանի պետական սուվերենության մասին հռչակագրի ընդունումը
դ. Հանրապետության օգտին անցկացված հանրաքվեն Իտալիայում
ե. Ջ. Քենեդու սպանությունը

1) դ,բ,ե,ա,գ
2) բ,ա,դ,գ,ե
3) ա,ե,գ,բ,դ
4) գ,ե,ա,բ,դ

**46** **Կատարել համապատասխանեցում.**

1. Պերսևս
2. Սուլլա
3. Կալիաս
4. Գայոս Մարիոս
5. Կլավդիոս

ա. հռոմեական զորահրամանատար
բ. Աթենքի դեսպան
գ. Հռոմի դիկտատոր
դ. Հռոմի կայսր
ե. Մակեդոնիայի արքա
զ. Սպարտայի արքա

1) 1-զ, 2-բ, 3-դ, 4-գ, 5-ա
2) 1-դ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-գ
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-զ
4) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա, 5-դ

**47** **Կատարել համապատասխանեցում.**

1. Պլավտոս
2. Հոմերոս
3. Սենեկա
4. Թուկիդիդես
5. Իսոկրատես

ա. պոեմ
բ. ողբերգություն
գ. կատակերգություն
դ. ճարտասանություն
ե. հուշագրություն
զ. պատմագրություն

1) 1-զ, 2-դ, 3-ե, 4-գ, 5-բ
2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-զ
3) 1-ե, 2-բ, 3-զ, 4-գ, 5-ա
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-զ, 5-դ

48 **Կատարել համապատասխանեցում.**

1. Ֆիլիպ II Օգոստոս
2. Ստեֆան Դուշան
3. Կոնրադ I Ֆրանկոնացի
4. Կարլոս Խիզախ
5. Հովհան Անհողին

ա. Գերմանիայի թագավոր
բ. Երուսաղեմի թագավոր
գ. Ֆրանսիայի թագավոր
դ. Սերբիայի թագավոր
ե. Անգլիայի թագավոր
զ. Բուրգունդիայի դուքս

1) 1-բ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա
2) 1-զ, 2-դ, 3-ա, 4-զ, 5-ե
3) 1-զ, 2-ա, 3-գ, 4-դ, 5-բ
4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա, 5-զ

49 **Պայմանագրերը դասավորել ըստ դրանց կնքման ժամանակի.**

ա. Ռուսաստանի միանալը Անտանտին
բ. Լոզանի պայմանագիրը
գ. Խորհրդա-իրանական պայմանագիրը
դ. Եռյակ դաշինքի ձևավորման ավարտը

1) բ,դ,գ,ա
2) ա,դ,բ,գ
3) դ,ա,գ,բ
4) գ,բ,ա,դ

50 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Յալթայի խորհրդաժողովը
բ. Թեհրանի խորհրդաժողովը
գ. Պոտսդամի խորհրդաժողովը
դ. Երկրորդ ճակատի բացումը

1) բ, դ, ա, գ
2) գ, ա, բ, դ
3) դ, գ , ա, բ
4) ա, բ, դ, գ



**Բ մակարդակ**

51 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Մինչև Ք.ա. III հազարամյակի սկիզբը Միջագետքը քաղաքական առումով միավորված չէր:
2) Եգիպտոսի առաջին պետականությունները ձևավորվեցին խոշոր բնակավայրերի հիմքի վրա,որոնք կոչվում էին նոմեր:
3) Երկու Եգիպտոսները միավորող փարավոն Մինան կառուցեց նոր մայրաքաղաք Թեբեն:
4) Երկրագործությունը Միջագետքում սկզբնավորվել է դեռևս Ք.ա. IX հազարամյակում:

52 **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Մեծ Բրիտանիայում 30-ից բարձր տարիք ունեցող կանայք առաջին անգամ ընտրելու իրավունք ստացան 1867թ.
2) Սոցիալիզմի ուսմունքի ստեղծողներն են Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը:
3) Լևելերների(հավասարականներ) առաջնորդը Օ. Կրոմվելն էր:
4) Սահմանադրական միապետությունն Անգլիայում սկզբնավորվել է XVIIIդ. երկրորդ կեսին ընդունված օրենքներով:

53 **Նշված պնդումներից ո՞րն սխալ.**

1) 2002թ. մայիսի 14-ին որոշվեց ՀԱՊ-ը վերածել լիարժեք միջազգային կազմակերպության:
2) 1990թ. հունիսի 12-ին ընդունվեց Ռուսաստանի պետական սուվերենության մասին հռչակագիրը:
3) 1991թ. նոյեմբերի 15-ին ԽՍՀՄ-ի Պետական խորհուրդը հաստատեց ԽՍՀՄ-ի փոխարեն Ինքնիշխան Պետությունների Միության ստեղծման վերաբերյալ պայմանագրի նախագիծը:
4) 1991թ. դեկտեմբերի 8-ին ստորագրվեց Բելովեժսկի համաձայնագիրը:

54 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. պոլիս
2. էվպատրիդ
3. գերուսիա
4. բարբարոս

ա. Հին Աթենքում՝ տոհմային ավագանու ներկայացուցիչ:
բ. Հին հույների կողմից բոլոր օտարազգիներին տրվող հավաքական անվանում:
գ. Հին հունական քաղաք-պետություն:
դ. Ավագների խորհուրդ Հին Սպարտայում:
ե. Ժողովրդական ժողով Հին Հունաստանում:

1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
3) 1-դ, 2-բ, 3-ե, 4-ա
4) 1-ա, 2-ե, 3-գ, 4-դ